2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Երևանի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 46-Ն որոշման՝ 2021 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 19:00-ին գումարվելու է Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 5-րդ նիստը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևան քաղաքի 2022 թվականի զարգացման ծրագրում ներառելու նպատակով երիտասարդության բնագավառի հիմնախնդիրներից բխող միջոցառումներ կազմակերպելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և քննարկում (Խորհրդի անդամներ):
2. Երիտասարդության բնագավառի հիմնախնդիրներից բխող ներքոհիշյալ հարցերի վերաբերյալ Խորհրդի անունից Երևանի քաղաքապետին ներկայացնելու նպատակով փաստաթղթի քննարկում.

   ա) տոտալիզատորների և վիճակախաղերի գովազդի ծավալի վերաբերյալ,

   բ) 2022թ. բյուջեով երիտասարդության ոլորտին որոշակի միջոցներ տրամադրելու վերաբերյալ,

   գ) համայնքային երիտասարդական կենտրոն հիմնադրելու վերաբերյալ,

   դ) համայնքային ենթակառուցվածքները, երիտասարդության ոլորտում որոշակի խնդիրների լուծման նպատակով, օգտագործելու վերաբերյալ,

   ե) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Երիտասարդության հարցերի բաժնի՝ որպես առանձին ստորաբաժանման ձևավորման վերաբերյալ:
3. Կամավորների միջազգային օրվա կապակցությամբ Երևան համայնքի լավագույն կամավորների պարգևատրման միջոցառման քննարկում:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2021 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 19.00-ին, Երևանի քաղաքապետարանում՝ Երևանի Արգիշտի 1 հասցեում, տեղի ունեցավ Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 5-րդ նիստը, որին Խորհրդի 20 անդամներից մասնակցում էին 12-ը:

Նիստը, Խորհրդի նախագահի համաձայնությամբ, վարում էր Խորհրդի քարտուղար Գրիգոր Երիցյանը:

Գրիգոր Երիցյանը ներկայացրեց 5-րդ նիստի օրակարգը:

Օրակարգի 1-ին կետին համաձայն քննարկվեց Երևան քաղաքի 2022 թվականի զարգացման ծրագրում ներառելու նպատակով երիտասարդության բնագավառի հիմնախնդիրներից բխող միջոցառումներ կազմակերպելու վերաբերյալ Խորհրդի անդամների առաջարկությունները, որոնք խորհրդատվության ձևով կներկայացվեն Երևանի քաղաքապետին և կարող են դիտարկվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի կողմից 2022 թվականի զարգացման ծրագիրը մշակելիս:

Աննա Թովմասյանը խնդրեց պարզաբանել, թե արդյոք 2021թ. զարգացման ծրագրով նախատեսված միջոցառուները ևս կարող են ընդգրկվել 2022թ. ծրագրում, ինչպես նաև պարզաբանել «Երևան քաղաքի խնդիրների լուծմանը միտված երիտասարդական նորարարական ծրագրերի ֆինանսավորում» միջոցառման իրականացման ժամկետները:

Գրիգոր Երիցյանը պարզաբանեց, որ 2021թ. միջոցառումների մեծ մասը չի իրականացվել ֆինանսավորման բացակայության, ինչպես նաև այլ խնդիրների պատճառով և բնույթով լինելով ամենամյա միջոցառումներ կարող են ընդգրկվել 2022թ. ծրագրում: Իսկ «Երևան քաղաքի խնդիրների լուծմանը միտված երիտասարդական նորարարական ծրագրերի ֆինանսավորում» միջոցառման վերաբերյալ Մարիամ Մարտիրոսյանը պարզաբանեց, որ միջոցառումը նախատեսվում է անցկացնել 2021թ.՝ կազմակերպություններին աջակցություն տրամադրելու միջոցով և միջոցառման կազմակերպչական աշխատանքները արդեն իսկ մեկնարկել են և գտնվում են ընթացքի մեջ: Միջոցառումների վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու համար՝ որպես ուղենիշ, նա նաև ներկայացրեց 2022 թ-ի երիտասարդական

միջոցառումների համար ակնկալվող բյուջեի նախնական չափը, որը կազմում է 25 մլն. ՀՀ դրամ :

Ռաֆֆի Գյոզալյանը առաջարկեց Երիտասարդների միջազգային օրվան նվիրված ամեն տարի մայրաքաղաքում կազմակերպել համաքաղաքային լայնածավալ միջոցառում: Նաև առաջարկեց Էրեբունի-Երևան տոնակատարության շրջանակներում կազմակերպել մայրաքաղաքի արձանների լվացման միջոցառում՝ ներգրավելով երիտասարդությանը և Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպությունների սովորողներին:

Վերը նշված առաջարկի առնչությամբ հանդես եկավ նաև Դավիթ Մուրադյանն, ով առաջարկեց տոնակատարության շրջանակներում կազմակերպել նաև պլոգինգ՝ մարաթոնի ձևով աղբի մաքրման միջոցառում: Նա առաջարկեց Խորհրդին գրավոր ներկայացնել միջոցառման անցկացման նկարագրությունը:

Տիգրան Ավագյանն առաջարկեց էլեկտրական տրանսպորտային միջոցներով կազմակերպել հանրային արշավ մայրաքաղաքի փողոցներում՝ շրջակա միջավայրի պահպանման պրոպագանդման նպատակով:

Այս համատեքստում Գրիգոր Երիցյանն առաջարկեց՝ որպես այլընտրանքային տրանսպորտային միջոց դիտարկել նաև հեծանիվներով արշավ անցկացնելու գաղափարը:

Անի Հովսեփյանը անդրադարձավ Երիտասարդության շրջանում տեղեկատվության մատչելիության և հասանելիության հետ կապված խնդրին և կարևորեց այս կապակցությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելը: Այս մտահոգության առնչությամբ, Գրիգոր Երիցյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքը վերագործարկվելու է մոտ ժամանակներս և առաջարկվել է կայքում առանձին բաժնով ստեղծել երիտասարդության մաս, որտեղ կարտացոլվի երիտասարդության բնագավարի բոլոր իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Անգելինա Ալեքսանյանը առաջարկեց յուրաքանչյուր տարի մայիսի 15-ին նշել երիտասարդ ընտանիքների տոնը, ինչը հնարավորություն կտա կարևորելու ընտանիքի ինստիտուտի դերը հայ հասարակությունում:

Տիգրան Ավագյանն առաջարկեց միջոցառումների շրջանակներում իրականացնել Երևան քաղաքում երիտասարդության կարիքների գնահատում, ինչն էլ կպատասխանի բոլորին հուզող հարցին, թե ինչպիսի երիտասարդ ենք ուզում տեսնել: Ինչպես նաև հետազոտության արդյունքում հնարավոր կլինի ֆիքսել կոնկրետ խնդիրներ, որոնց լուծման

համար հնարավոր կլինի Խորհրդի անունից դիմել տեղական և միջազգային դոնոր կազմակերպություններին: Այս կապակցությամբ Գրիգոր Երիցյանը պարզաբանեց, որ զարգացման ծրագրի չկատարված մասն է կազմում նաև կարիքների գնահատման միջոցառումը, միաժամանակ հավելեց, որ այս առնչությամբ բազմաթիվ հետազոտությունների արդյունքներ կան առկա, ինչն էլ նախնական փուլում կարող է հիմք հանդիսանալ միջոցառումների պլանավորման համար, մինչև հնարավոր կլինի իրականացնել զուտ Երևան քաղաքում առկա խնդիրների վերաբերյալ հետազոտություն:

Ամփոփելով օրակարգի 1-ին հարցը՝ Գրիգոր Երիցյանն առաջարկեց քննարկված, ինչպես նաև այլ առաջարկների վերաբերյալ, յուրաքանչյուրն իր մասով ներկայացնի փաստաթուղթ՝ տարեկան զարգացման ծրագրի ձևաթղթին համաձայն, որը կամփոփվի մեկ միասնական փաստաթղթում և Խորհրդի անունից կներկայացվի Երևանի քաղաքապետին և հավանության արժանանալու դեպքում կարող է ընդգրկվել 2022 թ. զարգացման ծրագրում:

Օրակարգի 2-րդ կետի ա) ենթակետին համաձայն քննարկվեց տոտալիզատորների և վիճակախաղերի գովազդի ծավալի վերաբերյալ նախորդ նիստում արծարծված հարցը, ինչի վերաբերյալ Տիգրան Ավագյանը հանձնառություն էր ստանձնել փաստաթուղթ կազմելու և Խորհրդի քննարկմանը ներկայացնելու: Վերջինս փաստեց, որ երկօրյա ժամկետում փաստաթուղթը կներկայացվի Խորհրդի անդամներին:

Ռաֆֆի Գյոզալյանը կարևորեց փաստաթղթում տոտալիզատորների և վիճակախաղերի գովազդի ծավալի վերաբերյալ վերջին տարիների համեմատական տվյալների ներառումը, ինչպես նաև առաջարկեց ուշադրություն դարձնել նմանատիպ գովազդի հարկման քաղաքականությանը:

Օրակարգի 2-րդ կետի բ) ենթակետին համաձայն քննարկվեց 2022թ. բյուջեով երիտասարդության ոլորտին միջոցներ տրամադրելու վերաբերյալ հարցը:

Գրիգոր Երիցյանը կարևորեց այս խնդրի վերաբերյալ ևս առաջարկություն ընդգրկել նախատեսվող փաստաթղթում, քանզի առանց բյուջեի հնարավոր չէ իրականացնել նախատեսվող ծրագրերը: Նա նշեց, որ մինչև 2021թ-ը երիտասարդական ծրագրերի իրականացման համար ֆինանսավորում չի հատկացվել, իսկ 2021թ. տրամադրվել է խիստ սահմանափակ բյուջե, որով հնարավոր չի եղել ողջ ծավալով իրականացնել 2021թ. զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումները: Իսկ նշված ծրագրերի իրագործման կարևորությունը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջով՝ համայնքի և

Երևանի քաղաքապետի երիտասարդության ոլորտի քաղաքականություն իրականացնելու պարտավորվածությամբ: Նա անհրաժեշտ համարեց նշված բոլոր արգումենտները մանրամասն ներկայացնել նախատեսվող փաստաթղթում:

Փաստաթղթի այս մասի կազմման հանձնառությունը ստանձնեց Աննա Թովմասյանը:

Հովհաննես Աղաջանյանը կարևոր համարեց հստակեցնել, թէ որն է ավելի նպատակահարմար՝ քիչ ֆինանսական միջոցներով փոքրածավալ միջոցառումների կազմակերպումը, թե շատ միջոցներով՝ ավելի լայնամասշտաբ միջոցառումների կազմակերպումը: Նա հավելեց, որ կողմ է լայնամասշտաբ միջոցառումների կազմակերպմանը:

Անգելինա Ալեքսանյանը կարևորեց տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների փոխկապակցվածությունը, նպատակն ու արդյունավետությունը:

Օրակարգի 2-րդ կետի գ) և դ) ենթակետերի համաձայն քննարկվեց համայնքային երիտասարդական կենտրոն հիմնադրելու և համայնքային ենթակառուցվածքները, երիտասարդության ոլորտում որոշակի խնդիրների լուծման նպատակով, օգտագործելու վերաբերյալ հարցերը: Շեշտը դրվեց համայնքային ենթակառուցվածքներից մեկում երիտասարդական կենտրոն հիմնելու կարևորության վրա, և համաձայնություն ձեռք բերվեց Խորհրդի անունից հանդես գալ փաստարկված առաջարկությամբ՝ մայրաքաղաքում երիտասարդական ենթակառուցվածք ունենալու կարևորության վերաբերյալ:

Խորհրդի անդամներից մի քանիսը փաստեցին, որ Երևանի քաղաքապետարանի Բուզանդի 3/1 հասցեում գտնվող մասնաշենքում առկա է տարածք, որը ժամանակին տրամադրվել է երիտասարդության հարցերով զբաղվող ստորաբաժանմանը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ճշտել այդ տարածքի վերաբերյալ տեղեկատվությունը և հնարավորության դեպքում խնդրել այն կրկին տրամադրել երիտասարդության ոլորտին՝ որպես երիտասարդական կենտրոն օգտագործելու համար:

Փաստաթղթի այս մասի կազմման հանձնառությունը ստանձնեց Գրիգոր Ջանիկյանը:

Օրակարգի 2-րդ կետի ե) ենթակետի համաձայն քննարկվեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Երիտասարդության հարցերի բաժնի՝ որպես առանձին ստորաբաժանման ձևավորման վերաբերյալ հարցը:

Գրիգոր Երիցյանը կարևորելով սույն հարցը մեկնաբանեց, որ 2018 թ-ին Երևանի ավագանու որոշմամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մի շարք ստորաբաժանումներ ենթարկվել են կառուցվածքային փոփոխությունների, ինչի արդյունքում սպորտի բաժինը վերակազմակերպվել է «Սպորտի և երիտասարդության հարցերի» բաժնի, որի

կազմում երիտասարդության հարցերով զբաղվում է միայն մեկ առաջատար մասնագետ: Այս իմաստով ռեսուրսները հավասարաչափ բաշխված չեն, ուստի արդյունավետություն ակնկալելն անիմաստ է: Ուստի անհրաժեշտ է Խորհրդի կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ, ինչի հիման վրա կարելի է Խորհրդի անունից ներկայացնել հիմնավորող փաստաթուղթ:

Տիգրան Ավագյանը շեշտեց, որ միանշանակ անհրաժեշտ է ունենալ երիտասարդության հարցերով զբաղվող առանձին ստորաբաժանում, փաստելով որ ներկայիս կառուցվածքի դեպքում երիտասարդության ոլորտի գործունեության արդյունավետությունը շոշափելի չէ, ֆինանսական ռեսուրսները ոլորտների միջև հավասարաչափ չեն բաշխվում, իսկ երիտասարդոյան ոլորտի սուբյեկների ձայնը լսելի չէ: Միաժամանակ առաջարկեց Խորհրդի միջոցով հանրային ճնշում գործադրել ղեկավար կազմի վրա:

Գրիգոր Երիցյանի կարծիքով նման ծայրահեղ քայի հաճախ դիմում են բոլոր ներքին ռեսուրսներն սպառելուց հետո: Բացի այդ նա փաստեց, որ ղեկավար կազմը բաց է համագործակցության համար և համոզված է, որ փաստարկված հիմնավորումներ ներկայացնելու դեպքում Խորհրդի կարծիքը հաշվի կառնվի:

Ռաֆֆի Գյոզալյանը հնարավոր համարեց հավելյալ գործառույթների սահմանվամբ ներգրավել հավելյալ մարդկային ռեսուրսներ և գնահատելով նոր պաշտոնները վերջիններս դասակարգել համապատասխան խմբերում, որը հնարավորություն կտա որոշել ոլորտի կարգավիճակը՝ առանձին ստորաբաժանում, թե այլ կառուցվածքային ստորաբաժանման կազմում:

Մարիամ Մարտիրոսյանը՝ որպես բաժնի ներկայացուցիչ, ներկայացրեց իր պաշտոնի անձնագրով սահմանված սակավ լիազորություններն ու հնարավորությունները ոլորտում գործունեություն ծավալելու և արդյունավետ աշխատելու համար՝ փաստելով նաև շատ հաճախ իր կողմից իր իսկ լիազորությունների գիտակցաբար վերազանցումը՝ ոլորտում որոշակի արդյունք գրանցելու համար, ինչը հակասում է ՀՀ օրենդրության պահանջներին:

Գրիգոր Երիցյանը նշեց, որ հետագայում դոնորների ներգրավման հարցում ավելի նպատականարմար է առանձին ստորաբաժանման առկայությունը երիտասարդության ոլորտում:

Անգելինա Ալեքսանյանը անդրադարձավ երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի ինստիտուտի կայացման խնդրին մեր իրականության մեջ և շեշտեց Խորհրդի դերի կարևորությունը այս խնդրի շուրջ: Նա նաև նշեց, որ այս խնդրի լուծման դեպքում հնարավոր կլինի ուշադրություն սևեռել ոլորտի կարևորության վրա:

Տիգրան Ավագյանն առաջարկեց Խորհրդին կտրուկ քայլերով բարձրացնել երիտասարդության հարցերի կարևորության հարցը և պատգամ մարմիններից պահանջել պատշաճ ուշադրություն երիտասարդության ոլորտին:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց այս հարցի շուրջ իրականացնել ուսումնասիրություն՝ հաշվի առնելով զարգացած երկրների փորձը և ներկայացնել փաստարկված առաջարկություն:

Օրակարգի վերջին 3-րդ հարցին անդրադառնալիս՝ Խորհուրդը ֆիքսեց, որ ժամանակը սպառվել է և քվեարկության դրվեց նիստը շարունակելու վերաբերյալ հարցը: 10 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ արդյունքով որոշվեց շարունակել նիստը՝ մինչև օրակարգի սպառումը՝ ևս 10 րոպե:

Քննարկման դրվեց «Կամավորների միջազգային օրվա կապակցությամբ Երևան համայնքի լավագույն կամավորների պարգևատրման միջոցառման» տեխնիկական բնութագիրը:

Գրիգոր Երիցյանը ներկայացրեց միջոցառման տեխնիկական մասը, որն իրականացվելու է գնման միջոցով, ապա հավելեց, որ բովանդակային և ընթացակարգային մասով անհրաժեշտ է Խորհրդի կարծիքը՝ միջոցառման կանոնակարգը պատրաստելու համար:

Խորհրդի որոշ անդամներ առաջարկեցին կանոնակարգում սահմանել անվանակարգեր՝ պարգևներ շնորհելու համար: Մինչդեռ մյուսներն առարկեցին՝ նշելով որ մասնակիցները ներկայացվելու են իրենց կազմակերպությունների կողմից՝ նախնական ընտրության արդյունքում, յուրաքանչյուր կազմակերպությունից մեկական ներկայացուցիչ:

Հովհաննես Աղաջանյանը կարևորեց միջոցառման կոնցեպտը և միջոցառման կազմակերպման գործողությունների հաջորդականությունը:

Գրիգոր Երիցյանն առաջարկեց մշակել միջոցառման կոնցեպտը՝ մշակման պատասխանատվությունը վերցնելով իր վրա:

Նիստի ավարտին որոշվեց Խորհրդի անդամների բոլոր կարծիքները և առաջարկությունները ներառել փաստաթղթի նախագծային տարբերակում և դնել քննարկման Խորհրդի հաջորդ նիստում:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**